

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ

Ռուզաննա Բարիջանի Թաղևոսյանի «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա /<< օրինակով/» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

#### **Ատենախոսության թեմայի արդիականությունը**

Տնտեսության միջազգային մրցունակության ապահովումը ցանկացած երկրի տնտեսական քաղաքականության առանցքային նպատակներից է, այն էլ ավելի կարևոր է փոքր տնտեսություն ունեցող երկրների համար, որոնց կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճի հիմնական աղբյուրը ապրանքների և ծառայությունների արտահանման մեծ տեսակարար կշիռն է արտադրվող ՀՆԱ-ում: Ժամանակակից պայմաններում, եթե երկիրը նպատակ ունի ապահովել տնտեսական աճի բարձր տեմպեր և բարեկեցության բարձր մակարդակ, ապա նա պետք է ձգտի զարգացնել ավելացված մեծ արժեք պարունակող միջազգայնորեն մրցունակ ապրանքների և ծառայությունների արտադրությունը և արտահանումը, իսկ այդ նպատակին հասնելու հիմնական միջոցը նորարարությունների/ինովացիաների/ մշտական և լայնամասշտաբ կիրառումն է տնտեսության և մարդկային գործունեության տարբեր ասպարեզներում: Այս խնդիրը ներկայումս չափազանց արդիական է Հայաստանի պարագայում, քանի որ մեր երկիրը մեծ ճանապարհ ունի անցնելու տնտեսությունը նորարարական ռելիսների տեղափոխելու ու այդ հիմքով երկրի միջազգային մրցունակությունը տարբեր ասպարեզներում ապահովելու ուղղությամբ: Ուստի, այս առումով ատենախոսության ընտրված թեման շատ արդիական է, քանի որ յուրաքանչյուր լուրջ հետազոտություն և ստացված համապատասխան արդյունքները էական ներդրում կարող են ունենալ երկրի տնտեսության զարգացումը ճիշտ ուղղությամբ ուղղորդելու համար:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիաների միջև փոխառնչության գնահատումն է և ՀՀ-ում ինովացիոն քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել միջազգային մրցունակության չափմանը վերաբերող տեսական մոտեցումները և առավել նշանակալի էմպիրիկ հետազոտությունները, ինովացիոն քաղաքականության միջազգային փորձը, գործիքակազմը և քաղաքականության իրացման մեխանիզմները,
- ուսումնասիրել ինովացիայի տարբեր տեսակների չափման տեսական մոտեցումները, ինչպես նաև քննական վերլուծության տեսանկյունից դիտարկել միկրո և մակրոմակարդակներում նշանակալի էմպիրիկ հետազոտությունները,
- հետազոտել ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը՝ ուսումնասիրելով ինովացիոն գործունեությանն առնչվող օրենսդրական դաշտը և մինչ այժմ կիրառված մեխանիզմները,
- ուսումնասիրել ՀՀ ինովացիոն ենթակառուցվածքները, դրանց գործունեությանը նպաստող և խոչընդոտող գործոնները, մարդկային կապիտալի վիճակը և դրա զարգացման խորքային խնդիրները,
- վերլուծել ՀՀ ձեռնարկությունների ինովացիոն կատարողականը և գնահատել դրանց ինովացիոն գործունեության և ձեռնարկության չափի, ինչպես նաև գործունեության ոլորտի փոխառնչությունները,
- գնահատել ձեռնարկության ինովացիոն գործունեության և վաճառքի աշխարհագրական ուղղության փոխառնչությունները,
- գնահատել մակրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության միջև կապը,
- համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ ինովացիոն ռեսուրսներն ու դրանց կենսագործման արդյունքները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիոն գործունեության փոխառնչությունն է: Հետազոտության առարկան ՀՀ միջազգային մրցունակության վրա ինովացիաների ազդեցության գնահատումն է:

**Հետազոտության մեթոդական, տեսական և տեղեկատվական հիմքերը:** Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, մասնավորապես՝ համեմատական վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական մեկնաբանման և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Վերջինս ներառում է ոչ պարամետրական թեստերի, կատեգորիկ փոփոխականների անկախության ստուգման թեստերի և պանելային ռեգրեսիոն մոդելի կիրառություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ՀՀ օրենքները, Կառավարության որոշումները, օրենսդրական այլ ակտեր, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի տարբեր հիմնադրամների, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակած զեկույցները, հոդվածները և աշխատանքային փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ կառույցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, պաշտոնական տեղեկագրերը և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազաները:

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում ներկայացված են թեմայի արդիականության հիմնավորումը, հետազոտության նպատակը, խնդիրները, ուսումնասիրման օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, դրանց գործնական կիրառելիությունը, ուսումնասիրության շրջանակում կատարված հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Միջազգային մրցունակություն, ինովացիա և ինովացիոն քաղաքականություն. տեսագործնական գնահատականներ»** գլխում մանրամասն վերլուծվում են միջազգային մրցունակության և դրա չափման

մեթոդաբանության հիմնահարցերը, պարզաբանվում են «ինովացիա» ֆենոմենի գիտական և գործնական ընկալումները, ինչպես նաև ուսումնասիրվում է ինովացիոն քաղաքականության միջազգային փորձը և դրա իրացման մեխանիզմները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ ինովացիոն համակարգի զարգացման օրենսդրական և գործնական հիմքերը»** գլխում խորությամբ ուսումնասիրված են ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը, ինովացիոն ենթակառուցվածքները և մարդկային կապիտալը, ինչպես նաև դրանց զարգացման օրենսդրական և գործնական հիմքերը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ինովացիայի և միջազգային մրցունակության կապի էմպիրիկ վերլուծություն (ՀՀ օրինակով)»** գլխում համապարփակ ուսումնասիրված են ՀՀ ինովացիոն ռեսուրսները և արդյունքները, մանրամասն վերլուծվում է ինովացիայի և միջազգային մրցունակության կապը մակրոմակարդակում և միկրոմակարդակում՝ ՀՀ ձեռնարկությունների տվյալների հիման վրա:

Ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացվում են եզրակացություններ և առաջարկություններ՝ վերհանված որոշ խնդիրների վերաբերյալ:

Ատենախոսության **գիտական նորույթը** արտահայտվում է տեսամեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներում, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- 126 երկրի կլաստերային վերլուծության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է երկրների կրթական համակարգի արդյունավետության և ընդհանուր ինովացիոն կատարողականի միջև առկա դրական կապը: Վերլուծության արդյունքներով Հայաստանը դասակարգվել է կրթության արդյունավետության և ինովացիոն կատարողականի միջին մակարդակ ունեցող երկրների շարքում:

- Միջազգային մրցունակության վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մոդելով 67 երկրի պանելային տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն գնահատման արդյունքում բացահայտվել է արտոնագրային հայտերի թվի և արտահանման միջև առկա դրական կապը, սակայն ազդեցության թույլ

ուժգնությամբ: Հիմնավորվել է արտոնագրերի աճի դրական ազդեցությունը արտահանման վրա:

- ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 1700 ձեռնարկությունների տվյալների հիման վրա ոչ պարամետրական Wilcoxon Rank Sum մեթոդով կատարված գնահատականներով հիմնավորվել է, որ կազմակերպության չափերը վերջինիս ինովացիոն գործունեությունը նշանակալիորեն սահմանափակող գործոն չէ:

- ANOVA մոդելի կիրառմամբ գնահատվել են ինովացիոն գործունեության ակտիվության տարբերությունները՝ ըստ Տնտեսական գործունեության դասակարգման (NACE խմբեր) տարբեր խմբերի և բացահայտվել ինովացիա կատարելու տեսանկյունից գործունեության ոլորտի նշանակալի լինելը:

- ՀՀ ձեռնարկությունների միկրոտվյալների հիման վրա Chi-Square թեստի կիրառմամբ գնահատվել են նրանց արտահանման շուկաների և ինովացիոն գործունեության փոխառնչությունները: Բացահայտվել է, որ ԵՄ և ասոցացված երկրների շուկաների վրա կողմնորոշված ՀՀ ձեռնարկություններն ավելի հաճախ են ինովացիաներ կատարում:

### **Ատենախոսության կառուցվածքի, բովանդակության գիտական դրույթների, եզրահանգումների և նորույթի մասով հիմնական դիտարկումները և դիտողությունները**

1. Ատենախոսության 3-րդ գլխում բացի վերլուծական նյութերից առկա են նաև ինովացիայի և միջազգային մրցունակության միջև գոյություն ունեցող կապերի վերաբերյալ ազդեցության մի շարք գնահատականներ, ուստի ատենախոսության կառուցվածքի տեսանկյունից ավելի նպատակահարմար կլիներ եթե վերջինիս 3-րդ գլխի և պարագրաֆների վերնագրերը ներկայացվեին այդ համատեքստում:
2. Ատենախոսը բավականին մանրամասն վերլուծել և հետազոտել է Հայաստանի ինովացիոն համակարգի տարբեր օղակներում տիրող իրավիճակը և արձանագրել, որ դրանց հիմնական մասում արդյունքները շատ հեռու են գոհացուցիչ լինելուց: Սակայն, նույն մանրամասնությամբ ատենախոսը չի

ներկայացրել իր առաջարկությունները իրավիճակը բարելավելու ուղղությամբ, չնայած եզրակացություններ և առաջարկություններ բաժնում նշել է համակարգի նոր ռազմավարության մշակման անհրաժեշտության մասին:

3. Վերը նշվածի առումով շատ օգտակար կլիներ եթե ատենախոսը առաջարկություններ ներկայացներ իր իսկ կողմից ուսումնասիրած ինովացիոն համակարգի առանձին էլեմենտների ձևավորման և զարգացման վերաբերյալ միջազգային փորձը մեր երկրում տեղայնացնելու վերաբերյալ:
4. Ատենախոսը ներածությունում նշում է, որ երկրների միջազգային մրցունակության վրա ինովացիաների ազդեցության գնահատմանը նվիրված գիտական հետազոտություններ «գրեթե չկան», սակայն իր իսկ կողմի բերված մի շարք հղումներ, հատկապես 3-րդ գլխում հակասում են այդ մտքին:

**Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական մամուլում հիմնական արդյունքների հրապարակումը և սեղմագրի համապատասխանությունը**

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու քննարկված հիմնախնդիրները ամփոփվել են 5 հոդվածում, որոնցից 3-ն ինդեքսավորված են միջազգային գիտաչափական Web of Science և Scopus շտեմարաններում, որոնք ներկայացված են առաքված սեղմագրում: Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ինովացիոն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարության կողմից: Ատենախոսության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինովացիաներով և միջազգային մրցունակությամբ զբաղվող մասնագետների համար:

**Եզրակացություն**

Նշված դիտողությունները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսությունում ստացված արդյունքները: Ռուզաննա Թադևոսյանի «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա /<< օրինակով/» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն գիտական հետազոտություն է, որում առկա հարցադրումները, եզրահանգումները, ստացված արդյունքները գիտական հետաքրքրություն ունեն մասնագիտական շրջանակների համար և կարող են օգտակար լինել գործնական կիրառության համար:

Ուստի, Ռուզաննա Բարիջանի Թադևոսյանի «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա /<< օրինակով/» թեմայով ատենախոսությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է ՀՀ ԲԳԿԳ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական Ընդդիմախոս՝  
ԱրմՍվիսթբանկի խորհրդի անդամ  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Արմենակ Դարբինյան

03 հուլիսի 2024թ.

Ա. Դարբինյանի ստորագրությունը  
հաստատում եմ՝  
ԱրմՍվիսթբանկի աշխատակազմի ղեկավար՝

Մուկուչ Պապոյան

03 հուլիսի 2024թ.

